ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 791Ա

03 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ինմասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀԿառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Նորոշման պահանջներովևքննարկելով Էդիկ Սերյոժայի Մելքոնյանի լիազորված անձ Աստղիկ Ժորայի Դավթյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սասունցի Դավթի /նախկին՝ Պետտնկարան/ թաղամասում գտնվող անշարժ գույքին /հիմք՝«Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 16.04.2026թ. հաստատված թիվ 1770 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 040114GMJ7LE/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք.Էջմիածին, Սասունցի Դավթի թաղամաս, 6 շենք թիվ 1 բնակարան:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 792-Ա

03 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՈՉ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂՈՒՄ ԱՌԵՎՏՈՒՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ «ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՎՈՐԳԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալը, քննության առնելով թիվ ՎԻ 11/26 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգված 2 հասցեում «Լուսինե Գրիգորյան Գևորգի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելու վերաբերյալ, պարզեց, որ

«Լուսինե Գրիգորյան Գևորգի» անհատ ձեռնարկատիրոջ (գրանցման հասցե՝ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաք, Դավիթ Անհաղթի փողոց, 30, պետ.գրանցման համար՝ 99.738111/2012-11-01, ՀՎՀՀ՝ 52190617, անձնագիր՝ AX0301755, տրված՝ 12.06.2024 թվականին, 057-ի կողմից, ն/ք՝ 017123787) կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգված 2 հասցեում թույլ է տրվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներ պարունակող արարք, այն է՝ ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելը, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի աշխատակիցների կողմից 22.05.2026 թվականին կազմված թիվ ՍԱ-4 արձանագրության հիման վրա, 2026 թվականի մայիսի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի և նույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Վաղարշապատի համայնքապետարանը հրավիրել և անցկացրել է լսում, որի վերաբերյալ «Լուսինե Գրիգորյան Գևորգի» անհատ ձեռնարկատերը պատշաճ ծանուցվել է, սակայն չի ներկայացել լսումներին: Վերջինիս փոխարեն լսմանը ներկայացել է լիազոր ներկայացուցիչ Վեմիր Գևորգի Հովհաննիսյանը /հիմք՝ լիազորագիր/:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

1. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի կողմից 22.05.2026թ. կազմված ՍԱ-4 արձանագրությունը և լուսանկարները:
2. Հանձնաժողովի 02.06.2026թ. թիվ ՎԻ 11/26 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ թիվ 1 արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«Լուսինե Գրիգորյան Գևորգի» անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգված 2 հասցեում իրականացրել է առևտուր, դրա համար ոչ սահմանված տեղում՝ համայնքային ընդհանուր օգտագործման տարածքում /մայթ/, արգելափակելով հետիոտների անխոչընդոտ տեղաշարժը, տեղադրել է մրգերով և բանջարեղեններով արկղեր և իրականացրել առևտուր:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2026 թվականի հունիսի 2-ին Վաղարշապատի համայնքապետարանում հրավիրվել է լսում, որի մասին «Լուսինե Գրիգորյան Գևորգի» անհատ ձեռնարկատերը պատշաճ ծանուցված է եղել: Լսմանը ներկայացել է վերջինիս լիազորված անձ՝ Վեմիր Գևորգի Հովհաննիսյանը և հայտնել է, որ ներկա պահին նշված հասցեն չի գործում և չի իրականացվում բացօթյան առևտուր, իր վստահորդին ներկայացված 162-րդ հոդվածի հետ որևիցէ կապ չունի: Ներկա պահին բոլոր թերությունները վերացված են, գործունեությունը իրականացվում է այլ հասցեով:

Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.

Սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը գալիս է հետևյալ եզրահանգման.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առևտրի իրականացման վայրի տեսակներն են՝ առևտրի կենտրոնները, սպառողական ապրանքների շուկաները, գյուղատնտեսական արտադրանքի շուկաները, կենդանիների շուկաները, տոնավաճառները (վերնիսաժները) և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերը:

Տվյալ դեպքում՝ «Լուսինե Գրիգորյան Գևորգի» անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգված 2 հասցեում իրականացրել է առևտուր, դրա համար ոչ սահմանված տեղում՝ համայնքային ընդհանուր օգտագործման տարածքում /մայթ/:

«Լուսինե Գրիգորյան Գևորգի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից հակահրավական վարքագիծը շարունակելու արդյունքում, չնայած այն դադարեցնելու մասին դրա համար լիազորված անձանց բազմիցս ներկայացված բանավոր պահանջներին, վերջինիս նկատմամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի աշխատակիցների կողմից 22.05.2026 թվականին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով կազմվել է թիվ ՍԱ-4 արձանագրությունը և իրավախախտման փաստի վերաբերյալ դրանց կատարման վայրում արվել են համապատասխան լուսանկարներ, որոնք հանդիսացել են արձանագրության անբաժանելի մաս, որոնց առնչությամբ՝ որպես իրավախախտմանը վերաբերելի ապացույց, արձանագրության կազման ժամանակ «Լուսինե Գրիգորյան Գևորգի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից որևէ դիտարկում չի արվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով, 23-րդ, 32-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Լուսինե Գրիգորյան Գևորգի» անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ նշանակել տուգանք՝ ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելու համար՝ **70 000 /յոթանասուն հազար/** ՀՀ դրամի չափով, առանց առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավման:

2. Նախազգուշացնել «Լուսինե Գրիգորյան Գևորգի» անհատ ձեռնարկատիրոջը, որ սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետի պահանջը չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

Ստորագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

2026-06-03 12:41:55 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 793Ա

03 հունիսի 2026թ. ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրը՝ 2026CJ9RQD և «Աիդա Բաղրամյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0393/ կողմից 19.05.2026թ. կազմված հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0144հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 46.4քմ /46.4քմ արտաքին և 40.4քմ ներքին/ մակերեսով խանութը և պարիսպը համարել Վաղարշապատ համայնքի սեփականություն: Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանց զբաղեցրած հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերին:
2. Օրինականացնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0144հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 46.4քմ /46.4քմ արտաքին և 40.4քմ ներքին/ մակերեսով խանութը և պարիսպը:
3.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցում գտնվող 46.4քմ /46.4քմ արտաքին և 40.4քմ ներքին/ մակերեսով խանութը, պարիսպը և դրանց պահպանման և սպասարկման համար զբաղեցրած 0.0144հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը առաջարկել գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել կառույցն իրականացնող անձին՝ Հայկ Արամի Բարսեղյանին:
4.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 794Ա

03 հունիսի 2026թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 9/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ.Մամիկոնյան փողոցի թիվ 9/2 տան բնակիչ Վարդան Դավթի Իսախանյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 21.03.2017թ. տրված թիվ 21032017-04-0023 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Սևան Թովմասյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 24.03.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20266RSNEG/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ.Մամիկոնյան փողոցի թիվ 9/2 հասցեում գտնվող 0.0131հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 130.4քմ /արտաքին 130.4քմ, ներքին 92.9քմ/ մակերեսով բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ.Մամիկոնյան փողոցի թիվ 9/2 հասցեում գտնվող 0.0131հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 130.4քմ /արտաքին 130.4քմ, ներքին 92.9քմ/ մակերեսով բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 256 758 /երկու հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր հիսունութ/ ՀՀ դրամ, որը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 795Ա

03 հունիսի 2026թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 37/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԼՈՂԱՎԱԶԱՆԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԹՎՈՎ 2 ՊԱՏՈՒՀԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Երևան քաղաքի Ա.Թախտաջյան փողոցի թիվ 1 շենքի թիվ 20 բնակարանի բնակիչ Ալիկ Նշանի Ֆահրադյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 25.08.2025թ. տրված թիվ 25082025-04-0065 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Էքսպերտ Դիալոգ» ՍՊԸ-ի / որակավորման վկայական թիվ 0378 / կողմից 19.02.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026DSPZQM/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացու փողոցի թիվ 37/1 հասցեում գտնվող 0.044հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 121.5քմ /արտաքին 121.5քմ, ներքին 104.7քմ/ մակերեսով բնակելի տունը, լողավազանը և ինքնակամ բացված թվով 2 պատուհանը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացու փողոցի թիվ 37/1 հասցեում գտնվող 0.044հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 121.5քմ /արտաքին 121.5քմ, ներքին 104.7քմ/ մակերեսով բնակելի տունը, լողավազանը և ինքնակամ բացված թվով 2 պատուհանը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 243 172 / երկու հարյուր քառասուներեք հազար հարյուր յոթանասուներկու / ՀՀ դրամ, որը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 796Ա

03 հունիսի 2026թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԻ 26-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Նազիկ Ռազմիկի Մարգարյանի լիազորված անձ Հարություն Սմբատի Գրիգորյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան Նազիկ Ռազմիկի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 15.01.2018թ. տրված թիվ 15012018-04-0022 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Ջիվան Հարությունյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 04.02.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026XTFDLS/ Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի 26-րդ փողոցի թիվ 4 հասցեում գտնվող 0.13հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 21.4քմ /արտաքին 21.4քմ, ներքին 21.4քմ/ մակերեսով պարիսպը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի 26-րդ փողոցի թիվ 4 հասցեում գտնվող 0.13հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 21.4քմ /արտաքին 21.4քմ, ներքին 21.4քմ/ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 25 873 / քսանհինգ հազար ութ հարյուր յոթանասուներեք / ՀՀ դրամ, որը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 797Ա

03 հունիսի 2026թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԻ 27-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Նազիկ Ռազմիկի Մարգարյանի լիազորված անձ Հարություն Սմբատի Գրիգորյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան Նազիկ Ռազմիկի Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 10.11.2016թ. տրված թիվ 10112016-04-0024 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Ջիվան Հարությունյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0390/ կողմից 04.02.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026BQATLS/ Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի 27-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող 0.10064հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 281.6քմ /արտաքին 281.6քմ, ներքին 232.2քմ/ մակերեսով բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի 27-րդ փողոցի թիվ 1 հասցեում գտնվող 0.10064հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված ընդհանուր 281.6քմ /արտաքին 281.6քմ, ներքին 232.2քմ/ մակերեսով բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 340 455 / երեք հարյուր քառասուն հազար չորս հարյուր հիսունհինգ / ՀՀ դրամ, որը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 798Ա

03 հունիսի 2026թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 14.07.2005թ. թիվ 1109-Ն որոշման, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Աիդա Բաղրամյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0393/ կողմից 19.05.2026թ. կազմված հատակագիծը և Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 04011ZSWQTYF.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող Էջմիածին քաղաքի Տիգրան Մեծի փողոցում գտնվող խանութին, պարսպին և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0144հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Տիգրան Մեծի փողոց թիվ 14:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 799Ա

03 հունիսի 2026թ. ք.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ 26.03.2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 453Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և նույն օրենքի 37-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 20.04.2026թ. թիվ Կ-20042026-04-0094 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ուժը կորցրած ճանաչել Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող, առաջին տեղակալի 26.03.2026թ. «Խոյ համայնքի ղեկավարի 31.10.2025 թվականի թիվ 1043-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 453Ա որոշումը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 800Ա

03 հունիսի 2026թ. ք.Էջմիածին

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 31.10.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1043-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և նույն օրենքի 37-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 102-րդ հոդվածի 3.4-րդ և 4-րդ մասերի, «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի 2-րդ հավելվածի 2.3-րդ մասի «Արմավիրի մարզի համայնքներն ու բնակավայրերը» ցանկի 2-րդ կետը, 2025 թվականի նոյեմբերի 23-ի «Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ի ընտրությունների արդյունքներով Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրվելու մասին» թիվ 37-Ա որոշումը ու Վաղարշապատ և Խոյ համայնքների միավորման և նոր Վաղարշապատ համայնքի ձևավորման փաստը և ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 20.04.2026թ. թիվ Կ-20042026-04-0094 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ուժը կորցրած ճանաչել Խոյ համայնքի ղեկավարի 31.10.2025թ. «Բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շինությունների նկատմամբ գույքային իրավունքները վերականգնելու հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ 1043-Ա որոշումը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 801Ա

03 հունիսի 2026թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳԱՅԱՆԵ ԼՅՈՎԱՅԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Մոնթեավան գյուղի թիվ 4 փողոցի թիվ 7 շենքի թիվ 3 բնակարանի բնակիչ Գայանե Լյովայի Վարդանյանի դիմումը՝ պարզվեց, որ համաձայն «Սևան Թովմասյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 30.01.2026թ. կազմված հատակագծի և «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 06.05.2025թ. հաստատված 2167 և 2169 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի և 06.05.2025թ. վավերացված, գրանցամատյանում թիվ 2167 համարով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրում լրացում և փոփոխություն կատարելու վերաբերյալ ծանոթագրության /, Վաղարշապատ համայնքի Մոնթեավան գյուղի 4-րդ փողոցում գտնվող 0.012հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում Գայանե Լյովայի Վարդանյանի կողմից, որպես սեփականություն տիրապետվող բնակելի տան նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված հողհատկացման և քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Մոնթեավան գյուղի 4-րդ փողոցում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը 0.012հա մակերեսով հողամասը համարել Գայանե Լյովայի Վարդանյանի /ծնված՝ 16.12.1972թ./, սեփականությունը:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ.ՅԱՅԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 802-Ա

03 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՈՉ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂՈՒՄ ԱՌԵՎՏՈՒՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ «ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ ՍԻՐԵԿԱՆ ՄԽԻԹԱՐԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող, համայնքի ղեկավարի առաջին տեղակալը, քննության առնելով թիվ ՎԻ 08/26 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փող., թիվ 10 հասցեում «Հովհաննեսյան Սիրեկան Մխիթարի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելու վերաբերյալ, պարզեց, որ

«Հովհաննեսյան Սիրեկան Մխիթարի» անհատ ձեռնարկատիրոջ (գրանցման հասցե՝ Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Առատաշեն, Նար-Դոս փողոց, 24 տուն, գործունեության հասցե՝ ք. Էջմիածին, Վազգեն Առաջին փող., թիվ 10 հասցե, պետ.գրանցման համար՝ 38.02712/2020-08-27, ՀՎՀՀ՝ 52124385, ն/ք՝ 018701987, տրված՝ 23.06.2025 թվականին, 057-ի կողմից) կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փող., թիվ 10 հասցեում թույլ է տրվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներ պարունակող արարք, այն է՝ ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելը, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի աշխատակիցների կողմից 21.05.2026 թվականին կազմված թիվ ՀՍ-2 արձանագրության հիման վրա, 2026 թվականի մայիսի 21-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի և նույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, հրավիրել և անցկացրել է լսում, որի անցկացման վայրի և ժամանակի մասին «Հովհաննեսյան Սիրեկան Մխիթարի» անհատ ձեռնարկատերը պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ներկայացել:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

1. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի կողմից 21.05.2026թ. կազմված ՀՍ-2 արձանագրությունը և լուսանկարները:
2. Հանձնաժողովի 29.05.2026թ. և 03.06.2026թ. թիվ 08/26 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները:
3. «Հովհաննեսյան Սիրեկան Մխիթարի» անհատ ձեռնարկատիրոջ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի քաղվածքը:
4. 29.05.2026 թվականի azdarar.am պաշտոնական հրապարակային ծանուցումների կայքում տեղադրված ծանուցման վերաբերյալ փաստաթուղթը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«Հովհաննեսյան Սիրեկան Մխիթարի» անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փող., թիվ 10 հասցեում իրականացրել է առևտուր, դրա համար ոչ սահմանված տեղում՝ համայնքային ընդհանուր օգտագործման տարածքում /մայթ/, արգելափակելով հետիոտների անխոչընդոտ տեղաշարժը, տեղադրել է մրգերով և բանջարեղեններով արկղեր և իրականացրել առևտուր:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2026 թվականի մայիսի 21-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի մայիսի 29-ին հրավիրվել է լսում, որը հետաձգվել է անհատ ձեռնարկատիրոջ կողմից ծանուցումը չստանալու պատճառով:

Այլ հերթի նշանակված լսումը հրավիրվել և անցկացվել է 2026 թվականի հունիսի 3-ին, իսկ ծանուցումը հրապարակվել է նաև ՀՀ հրապարակային ծանուցումների azdarar.am պաշտոնական կայքում:

«Հովհաննեսյան Սիրեկան Մխիթարի» անհատ ձեռնարկատերը, չնայած «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցված լինելով վարչական նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին՝ չի ներկայացել վարչական վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.

Սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը գալիս է հետևյալ եզրահանգման.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առևտրի իրականացման վայրի տեսակներն են՝ առևտրի կենտրոնները, սպառողական ապրանքների շուկաները, գյուղատնտեսական արտադրանքի շուկաները, կենդանիների շուկաները, տոնավաճառները (վերնիսաժները) և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերը:

Տվյալ դեպքում՝ «Հովհաննեսյան Սիրեկան Մխիթարի» անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջին փող., թիվ 10 հասցեում իրականացրել է առևտուր, դրա համար ոչ սահմանված տեղում՝ համայնքային ընդհանուր օգտագործման տարածքում /մայթ/:

«Հովհաննեսյան Սիրեկան Մխիթարի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից հակահիրավական վարքագիծը շարունակելու արդյունքում, չնայած այն դադարեցնելու մասին դրա համար լիազորված անձանց բազմիցս ներկայացված բանավոր պահանջներին, վերջինիս նկատմամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի աշխատակիցների կողմից 21.05.2026 թվականին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված

իրավախախտման հատկանիշներով կազմվել է թիվ ՀՍ-2 արձանագրությունը և իրավախախտման փաստի վերաբերյալ դրանց կատարման վայրում արվել են համապատասխան լուսանկարներ, որոնք հանդիսացել են արձանագրության անբաժանելի մաս, որոնց առնչությամբ՝ որպես իրավախախտմանը վերաբերելի ապացույց, արձանագրության կազման ժամանակ «Հովհաննեսյան Սիրեկան Մխիթարի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից որևէ դիտարկում չի արվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով, 23-րդ, 32-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և 57-րդ հոդվածի 2-րդ մասով, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Հովհաննեսյան Սիրեկան Մխիթարի» անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ նշանակել տուգանք՝ ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելու համար՝ **70 000 /յոթանասուն հազար/** ՀՀ դրամի չափով, առանց առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավման:

2. Նախազգուշացնել «Հովհաննեսյան Սիրեկան Մխիթարի» անհատ ձեռնարկատիրոջը, որ սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետի պահանջը չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

Ստորագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

2026-06-03 14:47:23 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 803Ա

03 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7 Բ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Արշալույս գյուղի թիվ 1 փողոցի թիվ 60 տան բնակիչ Լուսինե Վահանի Հովսեփյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ. Թումանյան փողոցի թիվ 7բ հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 2354866 տրված՝ 20.07.2007թ., «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 15.05.2026թ. կնքված թիվ 3732 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 040116AMXQFV/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաք, Հ.Թումանյան փողոց, թիվ 9/1 առևտրի սրահ:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 804Ա

03 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԻ 10-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 23 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Տարոն 2 ՔՇՀ թիվ 23 շենքի թիվ 3 բնակարանի բնակիչ Գոռ Արթուրի Մայիլյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 13032026-04-0083 տրված՝ 13.03.2026թ., «Մովսեսկոշին» ՍՊԸ-ի /որակավորման վկայական թիվ 0160/ կողմից 03.04.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04022W9WWAXZ, 04022WH9HGZQ/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ գյուղի 10-րդ փողոցի թիվ 23 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված շինությունների բաժանման սխեմայի. Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, գյուղ Ոսկեհատ, 10-րդ փողոց, թիվ 23 հողամաս, Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, գյուղ Ոսկեհատ , 10-րդ փողոց, թիվ 23/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 805Ա

03 հունիսի 2026 թ. ք. Էջմիածին

Ե. ՉԱՐԵՆՑԻ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 413 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ. Բաղրամյան փողոցի թիվ 22ա շենքի թիվ 46 բնակարանի բնակիչ Երեմ Աշոտի Մուրադյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 01052026-04-0002 տրված՝ 01.05.2026թ., «Հռիփսիմե Կիրակոսի Արսենյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0503/ կողմից 05.05.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 040119TT6WPK, 040113LHADN8/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ե. Չարենցի 1-ին թաղամասի թիվ 413 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 413 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Ե. Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 413/1 հողամաս :

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**